ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանին

Դիմումատուներ՝
1. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի ղեկավար
Արթուր Սաքունց
պետ. ռեգիստրի վկայական՝ 03 Ա 0704086
հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59
2. Հեղինե Սոսի Մակարյան
անձն.՝ AF0695104, տրված 15.10.2002թ.,
051-ի կողմից
հասցե՝ք. Վաղարշապատ, Շահումյան 27
Պատասխանողներ՝
1. ՀՀ հատուկ քննչական ծառայություն
2. ՀՀ գլխավոր դատախազություն
հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Դիմում

(ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ. Ռ. Հարությունյանի 03.03.2014թ. որոշումը վերացնելու և գործը նախաքննության ուղարկելու պահանջների մասին)

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր. Բաղալյանը, ուսումնասիրելով Հեղինե Մակարյանի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերն ու այդ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 03.03.2014 թվականի որոշման դեմ բերված բողոքը, մերժել է այն՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ և հաստատել քրեական գործ հարուցելը մերժելու՝ վիճարկվող որոշման օրինականությունը:

ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ Ա. Շահբազյանը, չի քննարկել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Ա. Սաքունցի ներկայացրած դիմում-բողոքը՝ գտնելով, որ 03.03.2014 թվականի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ Ա. Սաքունցի իրավունքները և շահերը չեն շոշափվել:

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1 2014 թվականի փետրվարի 10-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Շահումյան 27 հասցեում բնակվող ամուսիններ Աշոտ Մանուկի Խուդոյանը և Հեղինե Սոսի Մակարյանը դիմել են Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ[1]: Կազմակերպությանն ուղղված դիմումում վերջիններս հայտնել են, որ 2013 թվականի նոյեմբերի 28-ից նստացույց են սկսել ՀՀ նախագահական նստավայրի դիմաց: 2013 թվականի դեկտեմբերի 2-ի լուսաբացին մի խումբ ոստիկաններ իրենց ընտանիքին բռնի ուժով հեռացրել են Նախագահական նստավայրի դիմացից՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցի պատճառով: Կազմակերպությանն ուղղված դիմումում Ա. Խուդոյանը և Հ. Մակարյանը հայտնել են իրենց նկատմամբ բռնություն գործադրելու, իրենց բնակարան անօրինական կարգով մուտք գործելու և իրենց պատկանող որոշ իրեր փչացնելու, բջջային հեռախոսի և 20.000 ՀՀ դրամ գումարի անհետացման, ինչպես նաև Աշոտ Խուդոյանին 2013 թվականի նոյեմբերի 12-ին «Նուբարաշենի» հոգեբուժական կլինիկա տեղափոխելու մասին:

1.2 2014 թվականի փետրվարի 15-ին կազմակերպությունը դեպքի վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության[2] պետ Վ.Շահինյանին, պատճենը՝ ՀՀ գլխավոր դատախազ Գ.Կոստանյանին՝ պահանջելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաղորդմամբ ներկայացված հանցագործությունը (հանցագործությունները) բացահայտելու, քրեական գործ հարուցելու, հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ[3]:

1.3 2014 թվականի փետրվարի 25-ի N 12-133-14 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության պետ Վ.Ժ.Մուրադյանը կազմերպության հաղորդումը վերահասցեագրել է ՀՀ ՀՔԾ պետ Վ.Շահինյանին՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից Հ. Մակարյանի և Ա. Խուդոյանի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ ՀՀ ՀՔԾ-ում նախապատրաստվող նյութերի հետ համատեղ ընթացքը լուծելու համար[4]:

1.4 2014 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ՀՔԾ-ում Հ.Մակարյանը կազմակերպության հաղորդման հիման վրա բացատրություն տալու հետ միաժամանակ հաղորդում է ներկայացրել իրեն և իր ընտանիքի անդամներին առևանգելու, իրենց նկատմամբ բռնություն գործադրելու, ամուսնուն 2013 թվականի նոյեմբերի 11-ին, բռնություն գործադրելով, ՀՀ նախագահական նստավայրի դիմացից ոստիկանության աշխատակիցների կողմից անհիմն կարգով հոգեբուժարան տեղափոխելու մասին:

1.5 2014 թվականի մարտի 3-ին ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ.Ռ.Հարությունյանը, քննարկելով ներկայացված հաղորդումը, կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում[5]:

1.6 Սույն որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին ներկայացվել են դիմում բողոքներ Հ. Մակարյանի և կազմակերպության նախագահ Ա. Սաքունցի կողմից համապատասխանաբար 2014 թվականի մարտի 12-ին[6] և մարտի 17-ին[7]՝ ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ.Ռ.Հարությունյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 03.03.2014 թվականի որոշումը վերացնելու և գործը նախաքննության ուղարկելու պահանջներով:

---

[1] Այսուհետ՝ կազմակերպություն

[2] Այսուհետ՝ ՀՔԾ

[3] Տես հավելված 1՝ 15.02.2014թ. հանցագործության մասին հաղորդման պատճեն

[4] Տես հավելված 2՝ ՀՀ գլխավոր դատախազության գրության պատճեն

[5] Տես հավելված 3՝ 03.03.2014թ.որոշման պատճեն

[6] Տես հավելված 4՝ Հ. Մակարյանի 12.03.2014 թվականի դիմում-բողոքի պատճեն

[7] Տես հավելված 5՝ կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի 17.03.2014 թվականի դիմում-բողոքի պատճեն

1.7 ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ Ա. Շահբազյանը 25.04.2014 թվականի թիվ 12-133-14 գրությամբ հայտնել է կազմակերպության նախագահ Ա. Սաքունցին, որ 03.03.2014 թվականի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ Ա.Սաքունցի իրավունքները և շահերը չեն շոշափվել, հետևաբար բողոքը ՀՀ գլխավոր դատախազությունում չի քննարկվել[8]: Սույն գրությունը կազմակերպությունում ստացվել է 2014 թվականի ապրիլի 2-ին[9]

1.8 2014 թվականի մարտի 20-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր. Բաղալյանը, ուսումնասիրելով Հ.Մակարյանի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված դիմում-բողոքը, կայացրել է բողոքը մերժելու մասին որոշում[10], որը Հ. Մարկարյանը ստացել է փոստային առաքման միջոցով՝ 2014 թվականի ապրիլի 1-ին[11]:

2. Վարույթն իրականացնող մարմնի ոչ պատշաճ քննության վերաբերյալ պնդումներ

Քննարկելով կազմակերպության և Հ. Մակարյանի ներկայացրած հաղորդումները և կայացնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ.Ռ.Հարությունյանը ցուցաբերել է անգործություն՝ մի շարք կարևոր հանգամանքների շուրջ քննություն չիրականացնելով և դրանք փաստող կամ հերքող ապացույցներ ձեռք չբերելով, իսկ ձեռք բերված ապացույցների մեծ մասին տրվել է միակողմանի գնահատական՝ քողարկելով ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումները և անօրինական գործողությունները:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի իմաստով քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, **օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար**»:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից ոչ պատշաճ քննություն իրականացնելու փաստն ապացուցվում է ստորև ներկայացված պնդումներով:

2.1 Այսպես, ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ.Ռ.Հարությունյանը որոշման մեջ նշել է, որ դատաբժշկական փորձաքննության 25.02.2014թ. թիվ 514

---

[8] Տես հավելված 6՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ Ա. Շահբազյանի 25.04.2014 թվականի թիվ 12-133-14 գրության պատճեն

[9] Տես հավելված 7՝ փոստային ծրարի պատճեն

[10] Տես հավելված 8՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր. Բաղալյանի՝ 20.03.2014 թվականի բողոքը մերժելու մասին որոշման պատճեն

[11] Տես հավելված 9՝ փոստային ծրարի պատճեն

եզրակացությամբ պարզվել է, որ Ա.Խուդոյանի մոտ առկա վնասվածները՝ կրծքավանդակի հետին մակերեսին, ձախ սրունքի բերծվածքների ձևով, առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում և որոշել դրանց վաղեմությունը հնարավոր չէ՝ փորձաքննությանը ուշ ներկայանալու և բժշկական փաստաթղթերի բացակայության պատճառով:

Կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման մեջ նշվել է, որ Ա. Խուդոյանի կողմից ստացված վնասվածքները նկարահանվել են լրագրողների կողմից և ներկայացվել է azatutyun.am ԶԼՄ-ով հրապարակված նյութի էլեկտրոնային հղումը[12]: Վարույթն իրականացնող մարմինը որևէ միջոց չի ձեռնարկել նշված նյութը, գտնելու, ինչպես նաև ուսումնասիրության առարկա դարձնելու ուղղությամբ, որն առնվազն հնարավորություն կտար հասկանալ

- արդյոք Ա. Խուդոյանի մոտ առկա վնասվածները և տեսաձանագրության մեջ նկարահանված վնասվածքները համապատասխանում են իրար,
- տեսաձայնագրության մեջ նկարահանված վնասվածքները մոտավորապես երբ են ստացվել:

ԶԼՄ-ներով հրապարակված նյութերի տեսաձայնագրություններում երևում է, որ 2013 թվականի դեկտեմբերի 3-ին Հ. Մակարյանի և Ա.Խուդոյանի տուն գնացել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակցուհի Աննա Սաֆարյանը (ինչի մասին իր հաղորդման մեջ նշել է Հ. Մակարյանը), սակայն չի ձեռնարկվել որևէ միջոց Աննա Սաֆարյանից բացատրություն վերցնելու Ա. Խուդոյանի մարմնական վնասվածների մասով, հատկապես այն դեպքում, երբ որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը քննության առարկա է դարձրել նաև Ա. Խուդոյանի մարմնի երևացող հատվածներում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Գ. Մկոյանի կողմից վնասվածքներ նկատելու հանգամանքը:

2.2 Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ ներկայացվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետ Գ.Ամիրխանյանի և նույն բաժնի պետի տեղակալ Գ.Մկոյանի բացատրությունները: Մասնավորապես, Գ.Ամիրխանյանը հայտնել է, որ ահազանգեր են ստացվել այն մասին, որ ՀՀ ազգային ժողովի, ՀՀ սահմանադրական դատարանի մոտ հնարավոր են իրավախախտումներ՝ բռնության կոչեր, ոստիկանության հետ բախումներ, իսկ «Մարշալ Բաղրամյան» մետրոյի մոտ ինքնաշեն պայթուցիկներով անկարգություններ են լինելու: Հ. Մկոյանը հայտնել է, որ դեկտեմբերի 1-ին տեղեկացել է, որ ահազանգեր են ստացվել նստացույցի և դրան հարող տարածքներում նախապատրաստվող անկարգությունների մասին, իսկ Վաղարշապատի բաժնում ստացված տեղեկություններով նման իրավախախտումներ կարող էր կատարել Աշոտ Խուդոյանը, ով սպառնացել էր ինքնավնասումներ անել՝ ինքնահրկիզվել, հրկիզել կնոջը և երեխաներին:

Վարույթն իրականացնող մարմինը, սակայն, որևէ միջոց չի ձեռնարկել պարզելու, թե կոնկրետ ինչ տեղեկություններ և ահազանգեր են ստացվել ՀՀ ոստիկանության տարբեր բաժիններում, ովքեր են եղել այդ ահազանգերի հեղինակները, արդյոք ոստիկանության աշխատակիցները ճշտել են այդ տեղեկությունների

[12] Տես հավելված 10՝ տեսանյութի ձայնագրությունը՝ էլեկտրոնային կրիչով, նյութի էլ. հղումը՝ http://www.azatutyun.am/content/article/25189830.html

հավաստիությունը և այնուհետև ձեռնարկել կանխարգելիչ գործողություններ: Բացի նշվածը, չի պարզվել, թե

- արդյոք Ա.Խուդոյանն իսկապես սպառնացել է կատարել ինքնավնասումներ,
- երբ է Ա.Խուդոյանը նման սպառնալիքներով հանդես եկել,
- կոնկրետ ում է սպառնացել,
- ինչ գործողություններ էր պատրաստվում կատարել և երբ:

Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը բավարարվել է միայն ոստիկանության աշխատակիցների բացատրություններով, չի ձեռք բերել այլ ապացույցներ, որոնք կհաստատեին հանցագործությունների նախապատրաստումը, այդ թվում նաև այն մասին, որ Ա.Խուդոյանը պատրաստվել է ինքնավնասումներ կատարել: Միայն այս դեպքում կհիմնավորվեր ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործությունները կանխելու գործառույթի կատարման անհրաժեշտությունը:

2.3 ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի պետի տեղակալ Գ.Մկոյանը հայտնել է, որ նստացույցի վայրը այդ օրերին համարվել է ռեժիմային անտանգության գոտի, որի պատճառով էլ խուդոյանները չէին կարող մնալ այդտեղ:

Վարույթն իրականացրած ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ.Ռ.Հարությունյանը որոշման մեջ որևէ անդրադարձ չի կատարել «ռեժիմային անվտանգության գոտի» հասկացությանը: Մասնավորապես, չեն պարզաբանվել դրա հետ կապված մի շարք հարցեր՝

- «ռեժիմային անվտանգության գոտի» հասկացության էությունը,
- արդյոք այդ հասկացությունն ունի իրավական ձևակերպում,
- որ տարածքները կարող են մտնել ռեժիմային անվտանգության գոտու մեջ,
- երբ և ինչպիսի իրավիճակներում կարող է նման գոտի ստեղծվել,
- արդյոք որևէ տարածք ռեժիմային անվտանգության գոտի համարելու համար ընդունվում է որևէ իրավական ակտ և որ մարմնի կողմից,
- տվյալ դեպքում որ օրերին է նստացույցի վայրը համարվել ռեժիմային անվտանգության գոտի,
- արդյոք կայացվել է համապատասխան իրավական ակտ դրա վերաբերյալ և ում կողմից,
- արդյոք բացի նստացույցի և դրան հարող տարածքից այլ տարածքներ ևս մտել են ռեժիմային անվտանգության գոտու մեջ,
- դրանով ինչ սահմանափակումներ են նախատեսվել հասարակական տարածքի օգտագործման համար,
- արդյոք այդ ակտը հասանելի է եղել հանրությանը:

2.4 Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 03.03.2014թ. որոշման մեջ նշվել է, որ Ա. Խուդոյանին պատկանող հեռախոսը գտնվել է «Մարշալ Բաղրամյան» մետրոյի տարածքում իրականացվող կանխարգելիչ միջոցառումների ընթացքում՝ 2013 թվականի դեկտեմբերի 2-ին ժամը 09:00-ի սահմաններում: Որոշման բովանդակությունից կարելի է ենթադրել, որ 06:15-ից 09:00-ն ընկած ժամանակահատվածում նստացույցի վայրում մնացած մյուս իրերն արդեն տեղափոխված են եղել, այդ մասին իր բացատրության մեջ

նշել է նաև ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի 2-րդ գումարտակի 1-ին վաշտի 1-ին դասակի հրամանատար Ա. Ասլանյանը: Վերջինս հատնել է, որ Ա.Խուդոյանի և Հ.Մակարյանի մյուս իրերը հավաքարարները տեղափոխել են մետրոյի մեջ: ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի աշխատակիցները իրենց բացատրություններում նշել են, որ նրանք հրաժարվել են վերցնել իրենց իրերը՝ հայտնելով, որ հաջորդ օրը կրկին գալու են նստացույցի վայր, սակայն իրերը վերցնելուց հրաժարվելու փաստն ապացուցող որևէ այլ ապացույց չի ներկայացվել: Մինչդեռ, խուդոյանները նստացույցի վայրից հեռացել են՝ այնտեղ թողնելով նույնիսկ իրենց կոշիկները, ինչը փաստում է այն մասին, որ նստացույցի վայրից նրանք հեռացել են ոչ սեփական կամքով:

2.5 Վարույթն իրականացնող մարմինը քննության առարկա չի դարձրել այն հանգամանքը, թե ինչ պատճառով Էմմա Սահակյանը չի ցանկացել նստացույցի վայրում մնացած Խուդոյանների մանկահասակ երեխային հանձնել որպես ոստիկան ներկայացած անձանց, հատկապես այն դեպքում, որ որոշման 5-րդ էջում վկայակոչված «... Ոստիկանության ծառայողները, կրկին գնալով ք. Երևան՝ նույն վայր ...» մեջբերումը փաստում է, որ երեխային բերելու համար նստացույցի վայր գնացել են նախապես այդ վայրից Ա.Խուդոյանին, Հ.Մակարյանին և նրանց երեք երեխաներին հեռացրած նույն ոստիկանները կամ նրանց մի մասը: Եթե նշված ոստիկանների գործողությունների օրինականությունն ու իրավաչափությունը, ինչպես նաև խուդոյանների՝ սեփական կամքով ոստիկանների հետ հեռանալու հանգամանքը որևէ կասկած չհարուցեին, Էմմա Սահակյանը որևէ պատճառ չէր ունենա երեխային ոստիկաններին չտալու համար: Այս փաստն ապացուցվում է դեպքի վայրում գտնվող լրագրողների կողմից կատարված տեսաձայնագրությունների միջոցով, որոնք հրապարակվել են ԶԼՄ-ներով[13]:

2.6 Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման 7-րդ էջում վարույթն իրականացրած մարմինը եկել է այն եզրահանգման, որ «2013 թվականի դեկտեմբերի 2-ին Բաղրամյան 26-րդ հասցեի մոտ, դրանից հետո հիշյալ ընտանիքին տեղափոխելիս և Էջմիածին քաղաքի Շահումյան 27-րդ տան հասցեում կամ դրա շրջակայքում ծառայություն իրականացրած ՀՀ ոստիկանության ծառայողներն իրենց պաշտոնական լիազորությունները չեն անցել, /.../»:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ոստիկանության աշխատակիցներ Աշոտ Սարգսյանը, Սուրիկ Մելքոնյանը, Մանուկ Խաչատրյանը, Հուսիկ Հովհաննիսյանը, Ասլան Փիլոյանն իրենց բացատրություններում « /.../ ժխտել են Ա. Խուդոյանին տանը ընտանիքի հետ հարկադրաբար պահելու հանգամանքը՝ նշելով, որ այդ օրը ներգրավված են եղել ՌԴ նախագահի այցի հետ կապված այլ միջոցառումներում»: Մինչդեռ, ինչպես նշվեց վերը, վարույթն իրականացրած մարմինը նշել է, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց գործողություններով պաշտոնական լիազորությունների անցում թույլ չեն տվել նաև Էջմիածին քաղաքի Շահումյան 27 տան հասցեում կամ դրա շրջակայքում ծառայություն իրականացնելու ժամանակ: Սակայն, որևէ գնահատական չի տրվել այն հանգամանքին, թե

- կոնկրետ ինչ ծառայություն է իրականացվել Շահումյան 27 տան հասցեում կամ դրա շրջակայքում,

[13] Տես հավելված 10՝ տեսաձայնագրությունը էլեկտրոնային կրիչով, ԶԼՄ-ներով հրապարակված նյութի հղումը՝ http://www.youtube.com/watch?v=w5kTX_A0k14

- ում կողմից է իրականացվել այդ ծառայությունը,
- արդյոք ոստիկանության աշխատակիցները կարող էին նման ծառայություն իրականացնել Շահումյան 27 տան հասցեում կամ դրա շրջակայքում:

2.7 Կազմակերպության հաղորդման մեջ նշվել է ոստիկանության աշխատակիցների կողմից առանց թույլտվության խուդոյանների բնակարան մուտք գործելու և վերջիններիս իրերում 20.000 դրամի անհետացման մասին մասին: Սակայն, որոշման մեջ որևէ գնահատական նշված փաստերին չի տրվել, ինչը վկայում է այն մասին, որ նյութերի նախապատրաստման ընթացքում այդ ուղղություններով քննություն չի իրականացվել՝ այդպիսով կատարելով ոչ լրիվ և օբյեկտիվ քննություն:

2.8 Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 03.03.2014 թվականի որոշման մեջ նշվել է, որ ոստիկանութան աշխատակիցները իրենց բացատրություններում հայտնել են, որ խուդոյանները պարտավորվել են լքել նստացույցի տարածքը կամ 2013 թվականի դեկտեմբերի 1-ին ուշ երեկոյան կամ՝ դեկտեմբերի 2-ին վաղ առավոտյան: Մինդեռ, ոստիկանության աշխատակիցները, չսպասելով նրանց կողմից տարածքն ինքնակամ լքելուն, 2013 թվականի դեկտեմբերի 2-ի լուսաբացին՝ ժամը 06:15-ի սահմաններում, նստացույցի վայրից իրենք են հեռացրել խուդոյանների ընտանիքին՝ այդ ընթացքում գործադրելով բռնություն: Սակայն, ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ. Հարությունյանը որևէ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, թե ինչն է եղել պատճառը, որ ոստիկանության աշխատակիցները չեն սպասել խուդոյանների ինքնակամ հեռանալուն:

2.9 Հ. Մակարյանն իր հաղորդման, ինչպես նաև բացատրության մեջ նշել է, որ ՀՀ նախագահական նստավայրի դիմացից իրենց քաղաք Վաղարշատապ տեղափոխել են առանձին մեքենաներով, սակայն վարույթն իրականացնող մարմինը հիմք է ընդունել միայն ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի ՊՊԾ գնդի ծառայողներ Հ. Հարապետյանի և Ն. Նալբանդյանի տված բացատրությունն այն մասին, որ նրանց տեղափոխել են միևնույն մարդատար մեքենայով: Հարց է առաջանում, թե ինչպես կարող էին խուդոյանների ընտանիքի անդամները և ոստիկանության աշխատակիցները տեղավորվել մեկ մարդատար մեքենայում, հատկապես այն դեպքում, երբ Էմմա Սահակյանը ԶԼՄ նյութերում հայտնել է, որ նրանց տեղափոխել են շուրջ 15 ոստիկանության աշխատակիցներ:

2.10 Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ նշվել է, որ բացատրություններ են վերցվել խուդոյանների հարևաններից և հերքվել է դեկտեմբերի 2-ին նրանց տանը հարկադրաբար պահելու փաստը: Սակայն վարույթն իրականացնող մարմինը անտեսել է հաղորդմամբ և բացատրություններում նշված այն փաստը, որ Ա. Խուդոյանը և Հ.Մակարյանը կարողացել են ծածուկ դուրս գալ տնից և, հարևանից հեռախոս վերցնելով, զանգահարել են նստացույցի մեջ գտնվող Էմմա Սահակյանին, ում մոտ այդ պահին եղել է լրագրող Արմենը (epress լրատվական ծառայությունից), նրանց հայտնել են իրենց հարկադրաբար տանը պահելու մասին: Այս մասին քննություն իրականացնող մարմինը որևէ այլ տվյալ ձեռք չի բերել, չի փորձել պարզել, թե արդյոք խուդոյաններն իսկապես զանգահարել են Էմմա Սահակյանին, ինչ հեռախոսահամարից են զանգահարել, ինչ են հայտնել նրան և լրագրողներին:

2.11 Հ.Մակարյանի հաղորդման, ինչպես նաև կազմակերպությանն ուղղված դիմումում նշվել է նաև Ա.Խուդոյանին բռնությամբ հոգեբուժարան տեղափոխելու մասին: Այդ կապակցությամբ որոշման մեջ նշվել է, որ Ա.Խուդոյանը ուղեգրվել է հոգեբուժական կլինիկա հացադուլի և բերանը կարելու մասով նախապատրաստված նյութերի շրջանակներում: Սակայն, վարույթն իրականացնող մարմինը որևէ կերպ անդրադարձ չի կատարել այն հանգամանքին, որ Ա. Խուդոյանին տեղափոխել են հոգեբուժական կլինիկա բռնությամբ և այնտեղ պահել մինչև խնդրին արձագանքել են ԶԼՄ-ները: Այդ մասին վկայում են ԶԼՄ-ներով հրապարակած նյութերը[14]:

Կազմակերպությունը 2014 թվականի մարտի 7-ին տեղեկատվության հարցմամբ դիմել է ՀՀ ոստիկանության պետ Վ.Գասպարյանին՝ ստանալու տեղեկատվություն հետևյալի մասին՝

- ինչ հիմքով և ինչ նպատակով է Աշոտ Խուդոյանը տեղափոխվել հոգեբուժական հաստատություն,
- արդյոք Աշոտ Խուդոյանը ենթարկվել է հետազոտության,
- եթե այո, ապա խնդրում եմ հայտնել արդյունքների մասին,
- եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել պատճառները[15]:

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ Մ. Հակոբյանն իր 18.03.2014 թիվ 24/539 գրությամբ[16] հայտնել է, որ ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզի Վաղարշապատի բաժնի ծառայողները անկանխատեսելի ծանր հետևանքներից խուսափելու նպատակով ցանկացել են Ա.Խուդոյանին շտապօգնության մեքենայով տեղափոխել բուժհաստատություն՝ համապատասխան բուժօգնություն ցույց տալու նպատակով: Սույն գրությամբ, սակայն, չի նշվել նախապատրաստված նյութերի հիման վրա Ա. Խուդոյանին հոգեբուժական կլինիկա տեղափոխելու մասին, որի պայմաններում առաջանում է նաև այդ փաստի առթիվ նախապատրաստված նյութերի առկայությունը ճշտելու անհրաժեշտություն:

Այսպիսով, վերոգրյալն ապացուցում է, որ նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իականացրած ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ. Ռ. Հարությունյանը հիմնվել է միայն ոստիկանության աշխատակիցների բացատրությունների վրա (բացատրությունները տրվել են դեպքից շուրջ երկուսուկես ամիս անց), մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 15.05.2007թ. գանգատ թիվ 52391/99 Ramsahai and others v. The Netherlands գործով վճռի 326-րդ կետում սահմանել է հետևյալ միտքը. « (…) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան հարցաքննվել են միայն դեպքից մի քանի օր անց և այդ ժամանակահատվածում նրանք հնարավորություն են ունեցել պատահարը քննարկել միմյանց և այլոց հետ»:

Ռամսահայի գործով վճռի 330-րդ կետում սահմանված է. « (…) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան դեպքից հետո չեն պահվել մեկուսի և չեն հարցաքննվել գրեթե երեք օր (…): Չնայած, (…) չկա որևէ ապացույց առ այն,որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց

---

[14] Տես հավելված 10՝ տեսանյութի ձայնագրությունը էլեկտրոնային կրիչով, էլ. հղումը՝ http://www.youtube.com/watch?v=xcjLYGTHDDI

[15] Տես հավելված 11՝ կազմակերպության 07.03.2014 թվականի տեղեկատվության հարցման պատճեն

[16] Տես հավելված 12՝ ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ Մ. Հակոբյանի 18.03.2014 թ. թիվ 24/539 գրության պատճեն

գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է **նախաքննության պատշաճության էական թերություն**»:

Այսպիսով, վերոգրյալը թույլ է տալիս պնդել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացվել է գործի ոչ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում, որն էլ թույլ չի տվել արդարացի իրավական գնահատական տալ ոստիկանության աշխատակիցների գործողություններին:

3. ՀՀ գլխավոր դատախազության անգործության վերաբերյալ պնդումներ

Կազմակերպության հանցագործության մասին հաղորդման հիման վրա ոչ իրավաչափ գործողություններ կատարվել են ոչ միայն հետաքննության ընթացքում, այլ նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված դիմում-բողոքի քննարկման շրջանակներում:

Մասնավորապես, կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման հիման վրա կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված դիմում-բողոքը ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ Ա. Շահբազյանի կողմից չի քննարկվել, <u>քանի որ հիշյալ որոշումը չի շոշափել կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի իրավունքները և շահերը</u>: Այդպիսով, ցուցաբերվել է անգործություն՝ խախտելով հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշման դեմ ներկայացված բողոքի քննարկման ընթացակարգը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին», իսկ 2-րդ մասի համաձայն՝ «Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»: Սույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, այն է՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում»:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 03.03.2014 թվականի որոշումը սահմանված կարգով ուղարկվել է հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձանց՝ կազմակերպության նախագահ Ա. Սաքունցին ու Հ. Մակարյանին և պարզաբանվել է այդ որոշման բողոքարկման կարգը: Կազմակերպության նախագահ Ա.Սաքունցը, որպես հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձ, այդ որոշման դեմ ներկայացրել է բողոք ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին, սակայն ներկայացված բողոքը չի քննարկվել այն պատճառաբանությամբ, որ որոշմամբ իր իրավունքները և շահերը չեն շոշափվել: Մինչդեռ, թե՛ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելիս, թե՛ այդ հաղորդման հիման վրա կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բողոք ներկայացնելիս ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը պարտադիր պահանջ չի համարում

կատարված հանցագործությամբ կամ կայացված որոշմամբ հաղորդում ներկայացրած անձի իրավունքները և օրինական շահերը շոշափելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը: Սույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի համաձայն՝ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ: Սույն հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի ուժով՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է լուծել հետաքննության մարմնի, քննիչի որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին:

Հիշյալ հոդվածները վկայում են, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ հանցագործության մասին հաղորդում ներկայացված անձի կողմից բերված բողոքի քննության արդյունքում վերադաս դատախազը պետք է կայացնի համապատասխան որոշում:

4. *Դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ պնդումներ*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է իր իրավունքներն ու ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու անձի իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»: Սույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց

կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2009թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշման որոշման 5-րդ կետում հայտնել է, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

(...) Մասնավորապես քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, (...) որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, այսինքն՝ այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում:

5. Դիմումի պահանջը

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի, 278-րդ հդվածի 2-րդ մասի և 290-րդ հոդվածի դրույթներով,

խնդրում ենք

Վերացնել ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Հ.Ռ.Հարությունյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 03.03.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նախաքննության:

6. *Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը*

- Հավելված 1. 15.02.2014թ. հանցագործության մասին հաղորդման պատճեն,
- Հավելված 2. ՀՀ գլխավոր դատախազության գրության պատճեն,
- Հավելված 3. քրեական գործի հարուցումը մերժելու մասին 03.03.2014թ. որոշման պատճեն,
- Հավելված 4. Հ. Մակարյանի 12.03.2014թ. դիմում-բողոքի պատճեն,
- Հավեված 5. կազմակերպության նախագահ Ա.Սաքունցի 17.03.2014թ. դիմում-բողոքի պատճեն,
- Հավելված 6. ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ Ա. Շահբազյանի 25.04.2014 թ. թիվ 12-133-14 գրության պատճեն,
- Հավելված 7. փոստային ծրարի պատճեն,
- Հավելված 8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր. Բաղալյանի՝ 20.03.2014թ. բողոքը մերժելու մասին որոշման պատճեն,
- Հավելված 9. փոստային ծրարի պատճեն,
- Հավելված10.http://www.azatutyun.am/content/article/25189830.html, http://www.youtube.com/watch?v=w5kTX_A0k14, http://www.youtube.com/watch?v=xcjLYGTHDDI, տեսաձայնագրությունները էլեկտրոնային կրիչով,
- Հավելված 11. կազմակերպության 07.03.2014թ. տեղեկատվության հարցման պատճեն,
- Հավելված 12. ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ Մ. Հակոբյանի 18.03.2014թ. թիվ 24/539 գրության պատճեն:

Դիմումատուներ՝

1. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Ա. Սաքունց
2. Հ.Մակարյան

29.04.2014թ.